

եւ աշխատութեան սահմանը կը ստանձնէ: Ս. Աստուածածնի դուռնէն կը սկսին աշխատութեան, մին կ'աշխատի հիւսիսային կողմէն, իսկ միւսը հարաւէն: Գործը կ'ամբողջանայ եօթը տարիէն (ըստ արձանագրութեան երեք տարիէն): Այս ժամանակին լրանալէն յետոյ, երկու կողմերը դարձեալ սկսան Պապ ըլ խաշիկն: Այն ճարտարագետը՝ որ քաղաքին հարաւային մասը պարսպելու պարտականութիւնը ստանձնած էր, թագաւորին հրամանաւ գլխատուեցաւ, վստելի Վերնասաւ եկեղեցին եւ յարակից շիները, ինչպէս նաեւ Հայոց Ս. Փրկչի վանքը պարիսպին պաշտպանութիւնէն դուրս քողած էր: Ս. Աստուածածնի դրան առիւծներուն արձանները այն պատճառաւ դրուած էին հոն՝ որ կը յիշեցնէին ա'յն դէպքը որ առաջնորդած է վեհապետին կատարելու իր այս մեծ գործը՝ որ եթէ չի կատարուէր՝ առիւծները պիտի պատառէին զինքը, ինչպէս ազգարարուած է իր տեսիլքին մէջ (Han. F. էջ 94-97):

Գ. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՏԱՃԱՐԸ

Եզրպտոսէ ելլելէն 480 տարի յետոյ, Սողոմոն՝ Յաւիտենականին բնակութեան համար Տաճար մը շինեց, ըստ օրինակի եւ այն տեղւոյն վրայ զոր Աստուած ցոյց տուած էր Դաւիթի: Եօթնուկէս տարիէն Տաճարը շինելէն վերջ, Սողոմոն մեծ հանդիսութեամբ կատարեց նաւակատեաց հանդիսութիւնը:

423 տարի գոյութենէ վերջ, 588 ին (Ն. Ք.) Քաղզէացիք կործանեցին այս փառաւոր Տաճարը: Ան վերաշինուեցաւ Զօրաբարելի օրով. 516 ին ալ նաւակա-